ՀՏԴ 891.981

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ «ԵՎ ԱՅՐ ՄԻ ՄԱՇՏՈՑ ԱՆՈՒՆ» ՊՈԵՄԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Մ.Ե.Խաչատրյան
գրականության և լրագրության ամբիոն

Պ.Սևակը հայ բանաստեղծության գագաթներից է, որն իր արտասովոր, ինքնատիպ տաղանդով հայ քնարությունը հարստացրեց գեղարվեստական անկրկնելի արժեքներով միանգամայն թարմ բանաստեղծություններով և մեծագույնով երկերով, որոնցից է «Եվ այր մի Մաշտոց անուն» պոեմը՝ նվիրված հայոց դպրագետին՝ հայոց այբուբենի գյուտարար Մեսրոպ Մաշտոցին, որի սխրանքը հայրենասիրների հեռուներից ավելի ու ավելի է ակնհայտ դառնում: Մեր ժողովրդի ողբերգություններով և սխրանքներով հարուստ պատմությունը փաստում է, որ Մաշտոցի ստեղծած հայոց այբուբենը մի ամբողջ գրաբանակի հզորություն ունեցավ և կունենա:

Պարույր Սևակի և «Այր մի Մաշտոց անուն» պոեմը և հայոց լեզվին նվիրված նրա բանաստեղծությունները պատշաճ տեղ պետք է ունենա դպրոցական դասագրքերում և ուսուցանվեն պիտի առանձնակի հոգածությամբ նկատի ունենալով. որ ինչքան էլ, արդեն, մասնայական, այդուամենայնիվ Պ. Սևակի ստեղծագործությունները այնքան էլ «դյուրամարս» չեն, ինչպես, ասենք. Հովի. Թումանյանի «Ինկաբերդի աստը» կամ «Մարտն»:

Սևակի «Եվ այր մի Մաշտոց անուն» պոեմը սովորողներին մատուցելուց առաջ անհրաժեշտ է հանձնարարել ընթերցել պրոֆ. Գ. Սևակի «Մեսրոպ Մաշտոց» աշխատությունը, որ հանգամանորեն շարադրված է. մեծ դպրագետի կյանքն ու գործունեությունը, հայոց գրերի ստեղծման պատմությունը, պատմական այն ժամանակաշրջանը, երբ հասունացել էր սնիպական գիր ունենալու խնդրի լուծման հրատապ անհրաժեշտությունը:Պոեմի դյուրին ըմբռնելու բանալի կարող էր լինել նաև Պ.Սևակի «Գրի դեմ գրիչ. Մաշտոցի սխրագործությունը» հոդվածը, որը պետք է ներկայացնել տղաներին, շեշտելով հետևյալ գաղափարությունը. «Մեր պատմության 16-դարյա բարձունքից նայելով, Մաշտոցը մեզ երևում է նախ և առաջ իբրև մի միթիսարի բաղաքագետ, որի շահած տարություն ճակատամարտի հետ չի կայուղ համեմատվել մեր ազգարարների փառավոր հաղթանակներից և ոչ մեկը»: Հետաքրքիր ներկայացնել նախաբրիտանական Հայաստանը, հելլենասիրական բազմաստվածության ժամանակաշրջանը և պատմական ժամանակի թելադրանքը ունենալ սնիպական գիր, որպեսզի հոր, միակ Աստծուն Քրիստոսին չաղոթեին «օտար խոսքերով»: Բերել պոեմից համապատասխան հատվածը.

Նրանք ծնվում են իրենց ծնողի սեռականությունից,
Որպեսզի դաստան նոր գոռնդություն,
....
Նրանք ծնվում են , որ ապացուցեն,
Թե վերջը մի տեղ դառնում է սկիզբ:
Նրանք ծնվում են , որ ապացուցեն,
Թե այնտեղ է լոկ սկզբանքն սկսվում,
Որ վերջանում է ամեն մի հնար. . . 1

Պոեմի շիկացած հատվածները հանձնարարել անգիր, ահավասիկ այս մեկը.

... Նրանից առաջ կային աստվածներ՝
Երկնքի, սիրո, պտղաբերության,
Ինչպես փոթորկի, նաև ... դպրության,
Եթե բոլորը՝ մինչև իսկ ստոյգ,
Վերջիններս տոտ էր, տոտ ստուգապես.
Աստված կար, սակայն դպրություն չկար:
Նա հավատարիմ իր նոր հավատի,
Դպրության մեր տոտ աստծուն փնտրեց
Եվ ինքը մնաց նրա փոխանակ: 2

Մանրակրկիտ վերլուծել «Ժ» և «ԺԱ» գլուխները («Կլիված է արդեն հայրենիքը մեր»): Հայոց այբուբենը որպես հզոր զենք, նրաս վիթխարի, ազգապահպան նշանակությունը («Այն, ինչ որ անել չկարողացան Արշակ, Վռամշապուհ, Մուշեղ ու Մուշեղ, սա արեց միայն՝ անգեն ու անզորը»):

Վերլուծել՝

Նա օտար հրի ծարակի դիմաց
Մեր ինքնությունը կոփեց ու կռեց.
.....
Բանակի դեմ՝ թև.
Թրի դեմ՝ թռիչք.
Սպյան դեմ՝ թանաք.
Սրի դեմ՝ գրիչ.
Եվ դարաշի դեմ՝ Մատենադարան... 3

Տալ «Եվ այր մի Մաշտոց» պոեմի քանաբարաշատ հեղինակի բարդագիտական նպատակները, լեզվին նրա տված աստված ներ առ մայրենին: «Հայոց լեզու» բանաստեղծություն

Եվ նոքանիկ է ով քեզ կարող է կոչել մայրենի
Երանելի է ով քեզանով է խոսում ու դատում... 4

Այս տողերը բերել, ասում «Մայրենի լեզու» բանաստեղծությունը ներկայացնել, որտեղ մաշտոցագրերու մեր հրաշքին սիրահարված հեղինակը ստոր մատնում է հայտարարում մայրենին՝ «Անվերադարձելի մատնած սրբազան դարերի խորքից դարերին հասած»: Նշել, որ Մեսրոպ Մաշտոցի նպատակը, նրա նշանակի սկզբանքի հանդեպ բանաստեղծի տածած սերը «Եվ այր մի Մաշտոց» պոեմով չի սահմանափակվում: Մինչև պոեմը շարադրելը (1962), 1961-ին գրել է «Ժամք հավատքիի» բանաստեղծությունը՝ Մաշտոցի ծննդյան 1600- ամյակի առթիվ, որ օտար ափերում դնգեղող հայոց այրերին նախատեղով, պատանեցում է, որ «Խորհեն հույներեն, ապրեն հայերեն...»:

Ապա սովորողներին այս մասին տեղեկացնելուց հետո հանձնարարել անգիր նույն բանաստեղծության «Ե» հատվածը («Հռոմեական հարամ չեմ ծնվել»):

Ընդունել, որ պոեմը Պ. Սևակի նպատակադրած ժանրերից է: Նա գրել է մի ամբողջ շարք պոեմներ. մեզ կտավներում աստվել ևս հոդացել է մեզ մտածողի ու գրողի շռայլ տաղանդը: Բերել ակադեմիկոս Ս. Սարինյանի գնահատականը. ««Եվ այր մի Մաշտոց անուն» պոեմը հզոր տաղանդի ստեղծագործություն է, որ գեղարվեստական մտածողությունը հասնում է փիլիսոփայական անսովոր խտացման»: 5

Սովորողների գիտակցությանը հասցնել այն անհարկելի ճշմարտությունը, որ ազգի գոյատևման ամենակարևոր ու առաջին նրաշխիքը ազգային լեզուն է.. չկա լեզու, չկա ազգություն: Հիշեցնել, որ դեռևս մեր թվարկությունից առաջ հայոց արքա Տիգրան Մեծը հանգանակ խոց է. նեռում օտարասխոս հային, պահանջելով, որ հայկական հողի վրա հայը հայի հետ պիտի խոսի մայրենի լեզվով:

Կրկին անդրադառնալ «Եվ այր մի Մաշտոց անուն» պոեմին, բերելով «Իսկ իսկությունն չէ, որ գորից առաջ միշտ էլ լեզուն են մտաստաղաշտ հասում, և ինչ չի կարող ոչ մի զորք անել, լեզուն է անում» տողերը, բացել հարատև ենթատեքստը:

Մաշտոցի սկզբանքը վիճաբանող այս պոեմի և ոչ մի տեղը դուրս չթողնելով ուշադրությունից, տալ նրա գեղարվեստական արժանիքները՝ խոսքի բայլեր կայտարան, պատմական ժամանակաշրջանի խոր իմացությունը, հոդաբաշխ հայրենասիրությունը, դիպաշեղ հասնելամտությունները, տաղաչափական կատարելությունն ու թարմությունը: Ասել, որ Պ. Սևակը «աքանչելի ու նոյոլի» զենք է հանդարտ ազգային գիրը, որի դեմ անգոր է ցանկացած նեռ ու յաղթաղան: Հիրավի, մաշտոցյան այբբենի շարիխ մեր «փոքր ուժուն» կարողացավ գոյատևել հազարամյակներ, նրանով կերտվիցին գրական անկրկնելի կոթողներ, մագաղաթներին հանձնվեցին մեր հոգևոր անսպառ հարստությունն ու մտքի թռիչքը, երևակայության ճախրն ու ոգեղեն խոյանքը շարականներից մինչև «Մասյաց ողբերգության» պոեմը, «Եվ այր մի Մաշտոց անուն»-ից մինչև «Հայոց դանթեական»:

Նշել, որ Մուշեղ Գալշոյանի «Մամիրեն արքան» պատմվածքի հանանուն հերոսը հայոց այբբենին նվիրված կինոնկար: Լսել մայրենի լեզվին նվիրված Պ. Սևակի բանաստեղծությունների «Եվ այր մի Մաշտոց» պոեմի հատվածների արտասանությունները՝ վարպետ առմնարանների կատարմամբ:

Նշել, որ Մաշտոցի սկզբանքը հայ գրադեղեցիկ շատերի համար է ներշնչանքի աղբյուր դարձել, իսկ Մաշտոցը դարեր շարունակ դառնվել է սրբերի շարքը: Դոնմի հատվածները անգիր հանձնարարել սովորողների ընտրությամբ:

Ամփոփում

Այսպիսով, Պ. Սևակի «Եվ այր մի Մաշտոց» պոեմը, որը գեղարվեստական ազգուգական կոթող է՝ նվիրված Մեսրոպ Մաշտոցին, հարկ է՝ ըստ արժանվույն մատուցել սովորողներին: Սույն հոդվածում առաջարկվում է այդ երկը ուսուցանելու առավել արդյունավետ մանկավարժական մեթոդներ:

Резюме

Итак, поэма П.Севака "Ев айр ми Маштоц", которая является неповторимым художественным произведением посвященная М.Маштоцу и надо по достоинству преподнести ее учащимся. В этой статье предлагаются наиболее эффективные педагогические методы обучения этому произведению.

Մանրագրություններ

1. Պ. Սեւակ, «Եվ այր մի Մաշտոց» պոեմը, Եր. Լույս, 1991. 79 էջ:
2. Պ. Սեւակ, «Եվ այր մի Մաշտոց» պոեմը, Եր. Լույս, 1991. 40 էջ:
3. Պ. Սեւակ, «Եվ այր մի Մաշտոց» պոեմը, Եր. Լույս, 1991. 47 էջ:
4. Ս. Սարինյան, «Սերունդներ եւ ավանդներ», Եր.«Սովետական գրող»1984: